

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2018/2019 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բակալավրիատի ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.**

| Դասիչ           | Մասնագիտություն                               | Քննություններ |                       |        | Ընդամենը տեղեր | Այդ թվում՝ բանակից զորացրված | Ուսման վարձ /դրամ/ |
|-----------------|---|---------------|-----------------------|--------|----------------|------------------------------|--------------------|
|                 |   | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) |                |                              |                    |
| 031101.00.6     | Տնտեսագիտություն                              | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) | 100            | 10                           | 450 000            |
| 041101.00.6     | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) | 110            | 10                           | 450 000            |
| 041201.00.6     | Ֆինանսներ (ըստ ոլորտի)                        | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) | 120            | 10                           | 450 000            |
| 041301.00.6     | Կառավարում (ըստ ոլորտի)                       | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) | 110            | 10                           | 450 000            |
| 041401.00.6     | Շուկայագիտություն /մարքեթինգ/ (ըստ ոլորտի)    | Մ(գ)          | Հ(գ)                  | Օտլ(գ) | 50             | 5                            | 400 000            |
| 056201.00.6     | Վիճակագրություն                               | Մ(գ)          | Հ(գ)<br>կամ<br>Օտլ(գ) |        | 30             | 3                            | 350 000            |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |   |               |                       |        | <b>520</b>     | <b>48</b>                    |                    |

**Հ Պ Տ Հ Գ Յ ՈՒ Մ Ր ՈՒ Մ Ա Ս Ն Ա Ճ Յ ՈՒ Ղ**

| Դասիչ           | Մասնագիտությունը                              | Քննություններ |      |        | Ընդամենը տեղեր | Այդ թվում՝ բանակից զորացրված | Ուսման վարձ /դրամ/ |
|-----------------|---|---------------|------|--------|----------------|------------------------------|--------------------|
|                 |   | Մ(գ)          | Հ(գ) | Օտլ(գ) |                |                              |                    |
| 041101.00.6     | Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) | Մ(գ)          | Հ(գ) | Օտլ(գ) | 25             | 2                            | 380 000            |
| 041201.00.6     | Ֆինանսներ (ըստ ոլորտի)                        | Մ(գ)          | Հ(գ) | Օտլ(գ) | 25             | 2                            | 380 000            |
| 041301.00.6     | Կառավարում (ըստ ոլորտի)                       | Մ(գ)          | Հ(գ) | Օտլ(գ) | 20             | 2                            | 380 000            |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |   |               |      |        | <b>70</b>      | <b>6</b>                     |                    |

## ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

| Դասիչը          | Մասնագիտությունը        | Քնություններ |       |        | Ընդամենը տեղեր | Այդ թվում՝ բանակից զորացրված | Ուսման վարձ /դրամ/ |
|-----------------|-------------------------|--------------|-------|--------|----------------|------------------------------|--------------------|
|                 |                         | Մ(գ)         | Հլ(գ) | Օտլ(գ) |                |                              |                    |
| 041201.00.6     | Ֆինանսներ (ըստ ոլորտի)  | Մ(գ)         | Հլ(գ) | Օտլ(գ) | 20             | 2                            | 300 000            |
| 041301.00.6     | Կառավարում (ըստ ոլորտի) | Մ(գ)         | Հլ(գ) | Օտլ(գ) | 20             | 2                            | 300 000            |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |                         |              |       |        | <b>40</b>      | <b>4</b>                     |                    |

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են **2018թ. օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ:**

Դիմումի հետ ներկայացվում են.

ա/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) (բնօրինակ),

բ/ միջնակարգ կրթության վկայական (ատեստատ) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակ),

գ/ 6 լուսանկար (3x4 սմ չափսի),

դ/ զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական,

ե/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայող ծնողի զոհվելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին),

զ/ միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմներ,

է/ 2018, ինչպես նաև 2017 թվականի «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր՝ դրանց առկայության դեպքում,

ը/ Փաստաթղթերի ձևակերպման վճարի (1500 դրամ) և ԲՈւՀ-ում հանձնվող քննությունների համար նախատեսված վճարի (յուրաքանչյուր քննության համար 1500-ական դրամ) անդորագիր (վճարումները կատարվում են տեղում):

Դիմորդները քննություն են հանձնում <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) առարկաներից: Եթե դիմորդը մասնակցել է 2017 կամ 2018 թվականների միասնական քննություններին և ստացել է դրական միավորներ (7.5 և բարձր միավոր), ապա մրցույթին կարող է մասնակցել այդ միավորներով: Դիմորդներն իրավունք ունեն, պահպանելով միասնական քննությունների գնահատականները, հանձնել այդ առարկաների քննությունները և մրցույթին մասնակցել տվյալ առարկայի առավելագույն միավորով:

2017թ. և 2018թ. «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» և «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություն չհանձնած կամ վերահանձնել ցանկացող դիմորդները քննություն են հանձնում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ այդ առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

**Քննություններն անց են կացվելու 2018 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 16-ը:**

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովից, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, հեռ. (010) 59-34-73: